



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՆԴԵՅԻ



ՄԻՋԻՆ ԿԻՐԱԿԻ

15 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Հայ մանուկին կրօնական դաստիարակութեան մասին	Էջ 3
Ուսուցում ծովապահութեան մասին	Էջ 4
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(63.18-64.12)

Ձըլլայ որ ընդմիշտ կորսնցնենք Սիօնը, քու սուրբ լեռդ. որովհետեւ ահա մեր թշնամիները առժամաբար տիրեցին մեզի, ոտնակոխ ըրին քու սրբարանդ, եւ մենք եղանք առաջուան նման, երբ տակաւին մեր Տէրը չէիր դուն, երբ դեռ քու անունդ չէինք կրեր: Եթէ երկինքը պատուէիր եւ երկիր իջնէիր՝ լեռները քու դիմացդ պիտի դողային ու հալէին մոմի պէս, ինչպէս կրակը կ'այրէ անտառները եւ կը շողագնէ ծովերը. հակառակորդներդ պիտի ճանչնային քու անունդ եւ հեթանոսներ պիտի դողային քու դիմացդ:

Ոեւէ ականջ երբեւիցէ լսած չէ, ոեւէ աչք երբեք տեսած չէ Աստուած մը, բացի քեզմէ, որ իրեն յուսացողներուն ողորմի այնպիսի գործերով որ դուն ըրիր:

ճիշդ ինչպէս քանիցս իջար եւ անսպասելի հրաշագործութիւններէդ լեռները սասանեցան: Ոեւէ ականջ երբեւիցէ լսած չէ, ոեւէ աչք երբեք տեսած չէ Աստուած մը, բացի քեզմէ, որ իրեն յուսացողներուն ողորմի այնպիսի գործերով որ դուն ըրիր: Դուն

օգնութեան կը հասնիս բոլոր անոնց որոնք ուրախութեամբ արդարութիւն կը գործեն եւ քու ճամբաներէդ կը

քալեն: Բայց մեզի դէմ բարկացած ես հիմա, որովհետեւ մեզք գործեցինք եւ մոլորեցանք: Մեղքով վարակուած եւ պղծուած ենք բոլորս ալ. մեր արդար սեպած գործերն իսկ գարշելի են քեզի համար: Մեր անօրէնութիւններուն պատճառով չոր տերեւներու պէս կը թափթփինք եւ հովերը կը քչէն մեզ: Ա՛լ աղօթող չկայ քեզի, չկայ մէկը որ սթափելով քեզի ապաւինի. երես դարձուցիր մեզմէ եւ մեր մեղքերուն պատճառով մեզ նեղութեան մատնեցիր: Բայց դարձեալ, ո՛վ Տէր, մեր Հայրն ես դուն. մենք կաւ ենք, դո՛ւն ես Բրուտը, եւ բոլորս ալ ձեռագործդ ենք: Շատ մի՛ բարկանար մեզի, Տէ՛ր, յաւիտեան մի՛ յիշեր մեր մեղքերը: Տե՛ս, ահա, քու ժողովուրդդ ենք բոլորս: Սուրբ քաղաքներդ աւերուեր են, Սիօնը անբնակ է, Երուսաղէմը՝ աւերակ: Մեր սուրբ եւ փառաւոր տաճարը ուր մեր հայրերը քեզ կ'օրհնէին՝ հրկիզուեցաւ, եւ բոլոր հոյակապ կառոյցները կործանեցան: Այս բոլորին կրնա՞ս անտարբեր մնալ, ո՛վ Տէր, միթէ լո՞ւռ պիտի մնաս եւ շարունակե՞ս պատուհասել մեզ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՏՈՍԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(1.1-11)

Ես, Պօղոս, Աստուծոյ ծառան եւ Յիսուս Քրիստոսի առաքեալը, կոչուած եմ Աստուծոյ ընտրեալները բերելու հաւատքի եւ ճշմարտութեան ճանաչումին - այն ճշմարտութեան՝ որ աստուածպաշտութեամբ կը գտնուի - , որպէսզի յաւիտենական կեանքի յոյսը ունենան: Յաւիտենական ժամանակներէն

իսկ առաջ անսուտն Աստուած ինք խոստացաւ այդ կեանքը, իսկ հիմա յարմար ժամանակը եկած համարելով՝ այդ խոստումը յայտնեց իր Աւետարանով, որուն քարոզութեան կոչուեցայ մեր փրկիչ Աստուծոյ հրամանով:

Ո՛վ Տիտոս, մեր հասարակաց հաւատքի ճամբով իմ սիրելի որդիս, թող Հայրն Աստուած եւ մեր փրկիչը Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Քեզ կրետէ թողուցի, որպէսզի եկեղեցիին պէտքերը հոգաս եւ զայն կազմակերպես՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ երէցներ կարգելով, ինչպէս որ քեզի պատուիրեցի: Երիցութեան թեկնածուն պէտք է անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր ըլլայ եւ հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեամբ եւ անհնազանդութեամբ ամբաստանուած չըլլան: Արդարեւ եկեղեցւոյ առաջնորդը որպէս Աստուծոյ տնտես՝ պէտք է անմեղադրելի ըլլայ: Պէտք չէ յանդուգն, բարկացող, գինեմոլ, կռուազան կամ շահամոլ ըլլայ, այլ՝ հիւրասէր, բարին սիրող, զուսպ, արդար, մաքուր եւ ժուժկալ: Պէտք է ամբօրէն պահէ իր սորված վստահելի վարդապետութիւնը, որպէսզի կարենայ ուղիղ ուսուցումով յորդորել ուրիշները եւ յանդիմանել հակառակորդները: Որովհետեւ բազմաթիւ անհնազանդներ, դատարկախօսներ եւ միտք պղտորողներ կան, մանաւանդ հրէութենէ դարձածներուն մէջ, որոնց բերանը պէտք է փակել, որովհետեւ անոնք ամբողջ տուններ կը քանդեն, շահամոլութենէ տարուած ուսուցանելով այն՝ ինչ որ պէտք չէ ուսուցանել:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(7.37-52)**

Տօնին վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուս ոտքի կանգնած բարձրաձայն կ'ըսէր. «Ո՛վ որ ծարաւ է, թող ինծի գայ

եւ խմէ: Ով որ ինծի կը հաւատայ, ինչպէս Գիրքը կ'ըսէ, “Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բղխին”»:

Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. իսկ Հոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:

Ժողովուրդէն ոմանք երբ լսեցին այս խօսքերը, ըսին. «Այս է ճշմարիտ մարգարէն»: Ուրիշներ կ'ըսէին. «Օճեալն է, Քրիստոսը»: Իսկ ոմանք ալ կ'ըսէին. «Միթէ Գալիլիայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Գիրքը չ'ըսեր թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթլեհէմի մէջ պիտի ծնի»: Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան: Ոմանք ուզեցին ձերբակալել զինք, բայց ոչ ոք համարձակեցաւ:

Երբ տաճարին պահակները վերադարձան, քահանայապետներն ու փարիսեցիները հարցուցին անոնց. «Ինչո՞ւ զինք հոս չբերիք»: Պահակները պատասխանեցին. «Այդ մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած»: Փարիսեցիները ըսին. «Ի՞նչ, դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն կամ փարիսեցիներէն ոեւէ մէկը հաւատա՞ց անոր: Մեր օրէնքները չգիտցող տգէտ ամբօխը միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են»:

Նիկողեմոս, փարիսեցիներէն մէկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. «Արդեօք մեր օրէնքները մարդս կը դատե՞ն նախ քան զինք լսելը եւ գիտնալը թէ ի՞նչ ըրած է»: Անոնք պատասխանեցին Նիկողեմոսի. «Միթէ դո՞ւն ալ Գալիլիայէն ես. քննէ՛ Գիրքերը եւ պիտի տեսնես թէ Գալիլիայէն մարգարէ չ'ելլեր»:

«Ո՛վ որ ծարաւ է, թող ինծի գայ եւ խմէ: Ով որ ինծի կը հաւատայ, ինչպէս Գիրքը կ'ըսէ, “Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բղխին”»:

Բարոյաւոսական Գրականութեան
Եռադոմ Գրօր

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններէն՝ Գերայ. Տ. Գրիգոր Մ. Վրդ. Զիֆթնեան արդէն հեղինակ է եւ խմբագիր առաւել քան 20 գիրքերու: Ան քովն ի վեր Կաթողիկոսարանէն ներս իր ծանրաբեռն պարտաւորութիւններուն՝ ինքզինքն նըւրաժ է յատկապէս բարոյախօսական գրականութեան մշակումին:

Այդ կալուածի իր վերջին գիրքերը լոյս տեսան անցեալ տարի՝ 2008-ին. անոնց անուններն են՝ «Ուղիներու Որոնում» ու «Բարոյական եւ Հոգեւոր Սայթափումներ»:

Ան ունի հետաքրքրական, իմաստուն եւ գործնապաշտ նայուածք մը: Ոճը սահուն է եւ հանելի:

Յարմար տեսանք, որ մեր թերթիկի այս եւ յաջորդ թիւերուն մէջ երկու յօդուած հրամցնենք: Այս առիթով՝ «Ուղիներու Որոնում» գիրքէն՝ «Հայ Մանուկին Կրօնական Դաստիարակութիւնը» կը սկսի, որ շահեկան գրութիւն մըն է: Ահաւասիկ:

Խմբ.:

ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻՆ
ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Գրիգոր Ժ. Վրդ. Զիֆթնեան

Օրէ օր աւելի կը շեշտուի կրօնական դաստիարակութեան կենսական կարեւորութիւնը աշխարհի մէջ: Դեռ երէկ զայն անարգող, անտեսող, թերագնահատող մարդիկ, այսօր եկեղեցի կը դիմեն՝ խնդրելով, աղաչելով, պաղատելով եկեղեցական իշխանութիւններուն ու կառոյցներուն, տէր կանգնիլ նոր սերունդին, փրկելու համար զայն աշխարհի տարբեր տեսակի հոսանքներէն ու մոլորութիւններէն:

- Ի՞նչ պատահեցաւ: Ի՞նչ բան փոխուեցաւ, որ անոնք նման քայլի դիմեցին: Զէ՞ որ կարեւոր չէր կրօնը, չէ՞ որ ծիծաղելի բան էր «գիշեր-ցերեկ» եկեղեցի երթալն ու աղօթելը, չէ՞ որ հոգեւոր կեանքը միայն 60-ը անց մարդոց համար էր, երբ սաղմոսներու գիրքը առած, ակնոցը աչքերնուն պէտք է կարգային անոնք: Զէ՞ որ շարական երգելը միայն «ալէլուիա օրթի» կանչողներուն գործն էր: Վերջապէս, ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ բան փոխուեցաւ անոնց մէջ:

Նախ ըսեմ, որ ամէն ինչ տարիքի պէտք չէ՛ կապել: Զըսենք որ տարիքնին առին եւ խելքերնին գլուխնին եկաւ, հասունցան, մեծի պէս սկսան մտածել, եւայլն: Ո՛չ. տարիքը առած մարդ շատ եղած է անցեալին, որոնք մինչեւ գերեզման իրենց անաստուածեան ու անհաւատ գոյութիւնը քարշ տուած են, ու այդ վիճակով ալ փակած իրենց աչքերը:

Ուստի, այս «երկրաշարժին» բուն պատճառը այլ տեղ պէտք է փնտռել: Այսօրուան մարդուն այս արթնութիւնը, ընդհանուր աշխարհին մէջ կրօնական վերագարթօնքի մը առնչուած է: Աջ ու ձախ, հոս ու հոն կրօնական շարժումներու մասին կը լսէք: Վերագարթօնք մը սակայն, որուն ի յայտ գալուն զուգահեռ՝ երեւան կու գայ նաեւ այլ երեւոյթ մը՝ կրօնական անտարբերութիւնը:

Այս երկու երեւոյթներուն միջեւ կը տուայտին մանաւանդ ծնողներ: «Մեր դարը ուրիշ էր», «մեր ապրած օրերուն նման դժուարութիւններ չկային», «անցեալին կեանքը աւելի պարզ էր», այսպիսի արտայայտութիւններ կը լսենք, ճի՛շդ է, սակայն ժամանակի՛ն ալ պէտք չէ առնչել ամէն բան: Այլ՝ մարդո՛ւն: Մարդն է որ կը փոխուի յարաբերաբար զինք շրջապատող աշխարհին: Նիւթը բնական իր եղափոխութիւնը կ'ապրի. փայտը կը փտի, երկաթը կը ժանգոտի, թուղթը կը փճանայ, ինքնաշարժը կը մաշի, ներկը կը թափի, պատը փուլ կու գայ, ծառը կը չորնայ, եւայլն: Ճի՛շդ է դարձեալ, որ մա՛րդն ալ արտաքնապէս կը դիմափոխուի, կը ծերանայ, սակայն ատիկա անհատի մը վրայ երեւցող փոփոխութիւնն է միայն: Կայ նաեւ ընկերութիւնը, հաւաքականութիւնը, որ երբեմն իր դիմագիծը կը փոխէ ու կ'այլակերպուի: Այդ այլակերպութիւնը կամ դիմափոխութիւնը երկու ուղղութիւն կրնայ ունենալ.

ա.- դրական. եւ

բ.- ժխտական:

Դրական փոփոխութիւնը միշտ գնահատուած է բոլորին կողմէ: Ատիկա ճի՛շդ ուղիով յառաջագիմութիւնն է, որ ազգերն ու ժողովուրդները, հաւաքականութիւնները կ'ազնըւացնէ, կը բիւրեղացնէ եւ աւելի եւս կը մարդացնէ: Սակայն վա՛յ այն ընկերութեան, որուն հաւաքական կեանքը ժխտական ուղղութեամբ զարգացում կ'արձանագրէ:

Այսօր ամբողջ աշխարհը այս վտանգի հոսանքին մէջ բռնուած է: Մարդկային ընկերութիւնները կը նմանցնեմ հսկայ ովկիանոսին մէջ տատանող նաւերուն: Մեծ ու փոքր ժողովուրդները այնտեղ են,

**ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ**

**ՀԵՌՈՍԱԿ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ
ԽԱՐԵԳՐՈ՝ ԳԱՌԱԿ Ք. Գ.**

Զ ԳԼՈՒԽ

ՈՒՏՈՒՅՈՒՄ ԾՈՒՍՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՃԱՌԱՆ:

«Երբ ծով կը պահէ՛ք, տրտումներս մի՛ ըլլա՛մ կեղծաւորներուն մամն, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան, թէ ծով կը պահեն: Վստահ եղէ՛ք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ դուն ծով կը պահես, օժէ՛ գլուխդ եւ լուս՝ երեսդ, որպէսզի մարդիկ չտեսնեն թէ ծով կը պահես, այլ՝ միայն Հայրը, որ անտեսանելի է. եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս» (16-18):

Աւետարանիչը ծոմապահութեան մասին Յիսուսի խօսքը կը դասաւորէ ողորմութեան, աղօթքի եւ անոր կապուած ներողամտութեան ուսուցումներէն անմիջապէս ետքը: Նաեւ տալէ առաջ երկիրքի մէջ գանձեր դիզելու պատգամը: Թէ՛ կանխող ուսուցումները եւ յաջորդողը՝ իրարու սերտօրէն կապուած են, եւ իրարմով հասկնալի են, իրարմով կ'ամբողջանան եւ կ'արդարանան:

Ծոմապահութեան ուսուցումը ճիշդ կը նմանի ողորմութեան եւ աղօթքի ուսուցումներուն, որովհետեւ նախ կ'ակնարկէ ժամանակակից կրօնական ղեկավարներու ժխտական վարմունքին կամ կերպին, եւ ապա կը հրաւիրէ անոնց օրինակը չընդօրինակել, այլ ուղիղ ընթացք ունենալ կամ անկեղծ ըլլալ:

Քանի ողորմութեան, աղօթքի եւ ծոմապահութեան նիւթերը Յիսուսի կողմէ խօսուած են համեմատութեամբ ժամանակակից այլաւերած աւանդապահներուն, առաջին հարցումը որ կարելի է դնել՝ ասիկա է:

Երբայց իրենց կեանքին մէջ ի՞նչ քանով ներկայ էր ծոմապահութիւնը:

Նախ ըսեմ, որ ծոմ պահելը՝ բացարձակապէս չուտել կը նշանակէ: Ուրեմն, ծոմապահութիւնը՝ բացարձակապէս չուտելու ընթացք մըն է:

Ապա՝

Աստուծոյ օրէնքին մէջ ծոմապահութիւնը պարտաւորիչ նկատուած է միայն տարուան մէջ մէկ օրուայ համար: Թըշրին ամսուն

նոյն ովկիանոսին մէջ, որովհետեւ ներկայ համաշխարհայնացման դարուն, ուրիշ ծովեր չկան, այլ կայ մէկ ովկիանոս, որուն մէջ պիտի նաւենք բոլորս: Մեծ ազգեր՝ անընկղմելիներու նման խրկախօրէն կը ճեղքեն ջուրերը եւ կ'երթան յառաջ: Իսկ փոքր ժողովուրդներ, նաւակներու, մակոյկներու, կամ երբեմն լաստերու պէս մերթաջմերթ ձախ կը տատանին, աջէն ու ձախէն եկող ալիքներու ծփանքին յանձնուելով: Այդ փոքր նաւակներուն մէջ սակայն, երբեմն կան քաջարի նաւավարներ, որոնք իրենց բազուկի ոյժով կամ կռանուած փորձառութեամբ ու հաւատքով, երբեմն հսկայ ալիքներու կորաքամակ կռնակին վրայ կը պահեն իրենց փայտեայ նաւակը, փրկելով զայն ստոյգ ջախջախումէ:

Մեր ազգն այլ այդ փոքր նաւակներէն մէկն է, նետուած ովկիանոսի կապոյտ ջուրերուն վրայ: Կար ժամանակ (թերեւս մինչեւ այսօր որոշ սերունդի պատկանողներու կողմէ կը հոլովուի), երբ կը վախնայինք ձուլումէ, ու կը քարոզէինք մեր հայկական դիմագիծը պահպանել: Հիմա աւելի՛ն կայ. հայկականէն աւելի մեր ինքնութեան խաթարման վախը ունինք, ու ամէն տեղ, մեր եկեղեցիներուն մէջ, մեր դպրոցներուն մէջ, մեր ակումբներուն մէջ, մեր միութիւններուն մէջ, նոյնիսկ մեր տուններուն մէջ կը հարուածուինք համաշխարհայնացման ովկիանոսին ասեղ ալիքներէն:

Երբ կիսամերկ հարս կամ հաւատացեալ մը եկեղեցի կը մտնէ, կը նշանակէ մենք եկեղեցւո՛յ մէջ ապտակուած ենք այդ օտար ալիքէն: Երբ մեր աշակերտներէն մէկը (երբեմն փոքր դասարանի), պորտին վրայ օղակ կը դնէ, կամ լեզուն ու յօնքը ծակելով օղ կ'անցընէ՝ կը նշանակէ մենք դպրոցի՛ն մէջ ապտակուած ենք այդ ասեղ ալիքներէն: Երբ մեր պատանիներուն մօտ յարգանքը կը պակսի աւագ սերունդին նկատմամբ՝ կը նշանակէ մենք ապտակուած ենք մեր ակումբներո՛ւն մէջ այդ շառաչիւն ալիքներէն: Երբ ծնողասիրութեան երեւոյթը կամ անձնական բարոյական սրբութեան հասկացողութիւնը կը խաթարուի երիտասարդութեան բացուող մեր տղոց եւ յատկապէս մեր աղջիկներուն մօտ, կը նշանակէ մենք մեր ընտանիքներո՛ւն մէջ ալ ապտակուած ենք այդ կլանող ալիքներէն:

Եւ հոս է դերը կրօններուն, մանաւանդ քրիստոնէութեան, ուրիշ խօսքով՝ քրիստոնէական դաստիարակութեան:

(Շարունակելի 1)

10-ին, պէտք է որ հրեաները ծոմ պահէին, որովհետեւ այդ օրը Քաւութեան օրն էր եւ Աստուծոյ ամբողջ ժողովուրդին համար քահանայապետը Վկայութեան խորանին մէջ քաւութեան գոհեր կ'ընծայէր:

Ղեկապետը գիրքին 16-րդ գլուխը կը սահմանէ, որ բոլորն ալ այդ օրը իրենց անձերը պէտք է խոնարհեցնեն (Աստուծո՛յ առջեւ սեփական անձերը խոնարհեցնելու մասին է ըստւածը): Այնտեղ ծոմապահութեան մասին կը խօսուի՝ Քաւութեան օրը սեփական անձերը խոնարհեցնելու եզրով: Գրուած է. «Եւ այս անգի յաւիտեանական կանոն ըլլայ, որ եօթներորդ ամսուն, ամսուան տասներորդ օրը անձերը պէտք է խոնարհեցնէ՛ք ու բնաւ գործ մը չգործէ՛ք, թէ՛ բնիկը եւ թէ՛ անձ մէջ գտնուող օտարականը: Քանզի այն օրը քահանան անգի քաւութիւն պիտի կատարէ անգ մաքրելու համար, որպէսզի անձեր բոլոր մեղքերէն մաքրուի՛ք Տիրոջ առջեւ: Այն՝ անգի հանգստութեան շաբաթ պիտի ըլլայ եւ յաւիտեանական կանոնով մը պիտի խոնարհեցնէ՛ք անձեր անձերը... Եւ ասիկա անգի յաւիտեանական կանոն ըլլայ Իսրայէլի որդիներուն համար իրենց բոլոր մեղքերուն քաւութիւն ընելու՝ տարին անգամ մը» (ՂԷ 16.29-31, 34):

Քաւութեան օրուան առիթով «սեփական անձերը խոնարհեցնել»ը՝ ծոմապահութեան միակ պարտաւորութիւնը պիտի ըլլար երկար ժամանակ:

Երբ սակայն Քրիստոսի ժամանակներու հրէական սովորութիւններուն կը նայինք, կը տեսնենք որ սովորութիւնը փոխուած է արդէն: Յիշեցէք փարիսեցիին եւ մաքսաւորին առակը (ՂԷ 18.9-14):

Փարիսեցին տաճարին մէջ կանգնած Աստուծոյ դիմաց յոխորտանքով կը ներկայացնէ ինքզինք եւ ըրածը. նաեւ պարծենալով կ'ըսէ որ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահէ:

Յիսուսի ժամանակակից փարիսեցիները երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը ծոմ կը պահէին: Յովսէփոս Պատմիչէն գիտենք, որ կարգ մը տօներու կամ պատմական յիշատակներու առիթով ալ ծոմապահութիւն կ'ըլլար:

Բայց բոլոր ծոմապահութիւններն ալ, բացի Քաւութեան օրուան ծոմապահութենէն՝ Ս.

Գրային չէին, հետեւաբար պարտաւորիչ չէին երբեք: Այդ պատճառով ալ ընդհանրական կիրարկում չունէին, այլ խմբակցութիւններու աւանդութիւններ էին:

Արդ, Քրիստոս իր ժամանակի մարդոց կը խօսէր, որոնց մէջ կարգ մը փարիսեցիներ եւ անոնց շրջանակի մարդիկ՝ իրենց գլխուն մոխիր կը ցանէին եւ քուրձէ գգեստ կը հագնէին կամ իրենց դէմքը չէին յարգարեք՝ ցոյց տալու համար, թէ ծոմի մէջ են: Քրիստոս այս կեղծ կամ ցուցամոլ ծոմապահութիւնը կը դատապարտէ:

Ծոմապահութեան սխալ եւ ուղիղ հասկացողութիւնները շատ յստակ կերպով տրուած են Եսայի մարգարէին մօտ: Ես 58.3-7, 11-ի մէջ կը կարդանք.

Թէ ոմանք կը տրտնջան, որ Աստուած գիրենք չի լսեր: Անոնք կ'ըսեն.

«...անձեր ծոմապահութեան օրը՝ անձեր կամեցածը կը կատարէ՛ք եւ անգի երթակաները կը հարստահարէ՛ք: Ահա կոխի եւ վէճի ու չարութեան բռունցքով զարնելու համար ծոմ կը պահէ՛ք, սակայն կ'նուզէ՛ք որ անձեր անարար երկինք հասնի:

Իմ ընտրած ծոմապահութիւնս եւ մարդու մը իր անձը խոնարհեցնելու օրը այսպէ՛ս կ'ըլլայ:

Իր գլուխը կնիւնի պէս ձոնելով եւ իր տակ քուրձ ու մոխիր տարածելով կ'ըլլայ:

Ասիկա ծոմապահութիւն եւ Տիրոջ ընդունելի օ՞ր պիտի անուանես:

Ահա այս է իմ ընտրած ծոմապահութիւնս.

անիրաւութեան կապերը քակելը, լուծին կապերը թուլցնելը, հարստահարեալները ազատ թողուլը, ամէն լուծ կտրելը,

«Ահա այս է իմ ընտրած ծոմապահութիւնս. անիրաւութեան կապերը քակելը, լուծին կապերը թուլցնելը, հարստահարեալները ազատ թողուլը, ամէն լուծ կտրելը, հացդ անօթիին բաժնելը, թափառական տնանկները տունդ ընդունիլը, մերկ մը հագուեցնելը ու ինքզինքդ անտեսելը:»

հացդ անօթիին բաժնելը,
թափառական տնանկները տունդ ընդու-
նիլը,

մերկ մը հագուեցնելը
ու ինֆզիմֆդ անտեսելը:

...Եւ Տէրը միշտ քեզ պիտի առաջնորդէ:

Եւ քու հոգիդ երաշտի ատեն պիտի
կշտացնէ:

Եւ ոսկորներդ պիտի գօրացնէ:

Ու դուն ջրարփի պարտեզի պէս եւ ջուրը
չպակսող աղբերակի պէս պիտի ըլլաս»:

Աստուած կ'ըսէ, որ ծոմ պահելը
ձեռնապաշտութիւնն է: Գլխուն մոխիր ցանելը,
քուրձի վրայ նստիլը, ինքզինք տրտում ցոյց
տալը կամ նոյնիսկ տրտմիլը չէ՛ն իսկական

ծոմ պահելը: Իսկական ծոմապա-
հուսութիւնը զրկանքի այդ
օրերուն արդարութիւնն
եւ ողորմութիւնն կամ
բարեգործութիւնն կա-
տարելն է:

Եւ կարելի է հիմահարց
տալ: Ի՞նչ է նպատակը
ծոմապահութեան:

Քրիստոնէական ծո-
մապահութեան նպատակն է Քրիստոսի նմա-
նութիւնը սեփական անձին վրայ բերել:

Բայց ինչպէ՞ս կարելի է
ատիկա:

Առաջին. ինքզինք
Աստուծոյ առջեւ
խոնարհեցնելով:
«Խոնարհեցնել» բայը
ինձի մտածել կող տայ
կարեւոր բանի մը
մասին:

Քրիստոնէական
ծոմապահութեան
նպատակն է
Քրիստոսի
նմանութիւնը
սեփական անձին
վրայ բերել:

Ծոմը նախ պէտք է
ծառայէ մարդ արարածին մտածել տալու իր
բուն ինքնութեան կամ ինչ ըլլալուն մասին:

Մարդը Աստուծմէ հեռացնող մեծագոյն
մեղքը՝ ամբարտաւանութիւնն է: Հետեւա-
բար միակ միջոցը որ կրնայ մարդը
Աստուծոյ ներկայութեան բերել՝ նոյնինքն
խոնարհութիւնն է. ինքզինք կամաւորաբար
խոնարհեցնելն է, Աստուծոյ դիմաց սեփական
անձին ոչնչութիւնը զգալն է:

Երկրորդ. ծոմը պէտք է ծառայէ զգալու՝ որ
մենք Աստուծմէ կախում ունինք. Ան բըրտան
է, որուն դիմաց կաւով ձեռուած անօթ ենք:

Երրորդ. ծոմը պէտք է ծառայէ Աստուծմէ
ներում գտնելու: Հիմա յիշեցէք նախորդ
հատուածը, ուր կ'ըսուի՝ «Եթէ մարդոց ներէք
իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն
ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք
իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ պիտի
չներէ ձեր յանցանքները»:

Ծոմապահութիւնը ինքզինք խոնարհեցնել
է, որպէսզի Աստուած նաեւ մեր գործած
բոլոր յանցագործութիւնները ներէ: Յըս-
տակ է անշուշտ, որ Աստուծոյ առջեւ
ինքզինք խոնարհեցնելը՝ կը պահանջէ նաեւ
նմանին առջեւ ինքզինք խոնարհեցնել:
Մեր նմաններուն հանդէպ մեր վարմունքը
դարձեալ խոնարհութեան վարմունքը ըլլայ,
որպէսզի արարիչէն գտնենք այն՝ ինչ որ
կ'ակնկալենք:

Անոնք որ ձեռնապահութիւն կը սպասեն
Աստուծոյ ներումը, կ'ըսէ Յիսուս, իրենց
վարձատրութիւնը արդէն ստացած կ'ըլլան,
որովհետեւ մարդոց կողմէ իրենց եղած գնա-
հատանքը կամ գովասանքը կ'ըլլայ իրենց
վարձատրութիւնը:

Յիսուսի պատգամն է՝ «Երբ դուն ծոմ կը
պահես, օձէ՛ գլուխդ եւ լուս՝ երեսդ, որպէսզի
մարդիկ չտեսնեն թէ ծոմ կը պահես, այլ՝
միայն Հայրը, որ անտեսանելի է. եւ Հայրդ, որ
կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ
յայտնապէս»:

Սակայն ի՞նչ պիտի ըլլայ Աստուծոյ
վարձատրութիւնը:

Նախքան բոլոր տեսակի բարիքները,
այն ներումն է վարձատրութիւնը՝ որ մենք
կ'ակնկալենք Աստուծմէ:

Չորրորդ. ծոմապահութիւնը պէտք է
ծառայէ գտնելու մեր անձերուն ներքին
մաքրութիւնը, այլխօսքով մեր մտածողութեան
եւ զգացողութեան պայծառութիւնը, եւ
միաժամանակ մեր անձին գործութիւնը:

Ուտելիքի առատութիւնը յաճախ պատճառ
կ'ըլլայ, որ մեր մարմինը, հոգին եւ միտքը
թուլնան եւ կորսնցնեն իրենց առողջ
վիճակը:

Բիշկիները կը հաստատեն, որ մարմնին
զանազան տեսակի հիւանդութիւններ կող
զան սննդական ծանրաբեռնումէն: Մինչդեռ
ծոմապահութիւնը առիթ կող տայ, որ մարդը
գոնէ չափով մը ինքզինք թեթեւցնէ եւ
մարմինը, հոգին եւ միտքը վերագտնեն իրենց
առողջութիւնը եւ զգայութիւնը:

Հինգերորդ. ծոմապահութեան նպատակին այլ եզրը կը տեսնենք յաջորդ հատուածին՝ 19-21 համարներուն մէջ: Ծոմապահութիւնը կը ծառայէ սեփական անձերը երկինքին պատրաստելու. այլ խօսքով՝ ո՛չ թէ երկրա-յինով տարուելու, «ուր ցեցն ու ժանգը կը փճացնեն», այլ ինքզինք յանձնելու երկնայինին կամ նուիրուելու Երկինքի ար-քայութեան հաստատումին եւ Աստուծոյ կամքի կատարման:

Բայց Յիսուս իր աշակերտներուն կամ հետեւորդներուն յանձնարարե՞ց ծոմ պահել, թէ ոչ:

Առիթով մը Յովհաննէս Մկրտիչի աշակերտները Յիսուսի կը մօտենան եւ կ'ըսեն. «Ինչո՞ւ մենք եւ փարիսեցիները յաճախ ծոմ կը պահենք, իսկ քու աշակերտներդ չեն պահեր»: Յիսուս կը պատասխանէ. «Կարելի՞ է հարսանիքի հրաւիրեալներուն ըսել որ սուգ պահեն, երբ տակաւին փեսան իրենց հետ է: Ժամանակ պիտի գայ, երբ փեսան պիտի վերցուի իրենցմէ, եւ այն ատեն իրենք ալ ծոմ պիտի պահեն» (Մտ 9.14-15):

Ասիկա չի նշանակեր, թէ Յիսուսի աշակերտները ծոմ չէին պահեր, կամ թէ Յիսուս ինք չէր քաջալերեր ծոմ պահել: Յիշեցէ՛ք, երբ այլակերպութենէն ետք իրեն չար ոգի ունեցող երեխայ մը բերած էին, Յիսուս բժշկութեան համար շեշտեց կարեւորութիւնը աղօթքին ու ծոմապահութեան: Ան ըսած է. «...եթէ մանանիսի հատիկի մը չափ հաւատք ունենաք, պիտի կարենաք ըսել այս լերան.– Հոսկէ հոն տեղափոխուէ: Եւ պիտի տեղափոխուի: Ո՛չ մէկ բան անկարելի պիտի ըլլայ ձեզի համար: Բայց այս տեսակ չար ոգին միայն աղօթքով եւ ծոմապահութեամբ կարելի է դուրս հանել» (Մտ 17. 20-21):

Եկեղեցին ժառանգեց Քրիստոսի ծոմապահութեան կարեւորութեան մասին պատգամը: Եւ գայն կիրարկեց տարբեր տարբեր նպատակներու համար: Օրինակ՝ Առաքեալներուն Գործերը գիրքին մէջ, 13-րդ գլուխ, կը կարդանք. «Անտիոքի եկեղեցիին մէջ մարգարէներ եւ ուսուցիչներ կային, ինչպէս՝ Բառնաբասը եւ Շմաւոնը, որ Նիկեր կը կոչուէր, Կիրենացի Ղուկիոսը եւ Մանայէնը, որ Հերովդէս չորրորդապետի սննդակիցն էր, եւ Սողոսը: Օր մը, երբ ասոնք Տիրոջ պաշտամունք կը մատուցանէին ծոմ վիճակով, Ս. Հոգին ըսաւ.– Տրամադրեցէ՛ք

Բառնաբասն ու Սողոսը այն գործին՝ որուն կոչած եմ զիրեւնի: Այն ատեն ծոմապահութեամբ եւ աղօթքով ձեռք դրին անոնց վրայ եւ դրկեցին» (Գրծ, 13.1-3):

Կ'ուզեմ, որ այս առիթով մտածենք երկու հարցերու մասին:

Արդեօք ծոմապահութիւնը բարիքներու պատճառ է՞, թէ ոչ: Եւ արդեօք ի՞նչ կարելի է ըսել ծոմ պահելու մասին:

Յարդ ըստածները բաւարար են ցոյց տալու, թէ ծոմապահութիւնը պատճառ է բարիքներու: Սակայն երբ մէկը որեւէ կիրարկումի իսկական պատճառը եւ նպատակը չի գիտեր եւ անկէ գալիք բարիքները չի ճանչնար՝ շատ դիւրին ձեւով գայն աւելորդ կրնայ համարել: Երբ սկսի գիտնալ անոր պատճառը եւ նպատակը եւ ճանչնալ անոր բարիքները՝ այն ատեն չ'անտեսեր գայն:

Այսօրուայ մարդը եթէ երբեք կարեւորութիւն չի տար կրօնական գանազան կիրարկումներու, ներառեալ ծոմապահութեան, պատճառը այն է՝ որ անցեալի մարդը խորհրդածելու լայն ժամանակ ունէր: Մինչդեռ ներկայիս այնքան քիչ տեղ կը մնայ մերկեանքին մէջ խորհրդածելու, որ կրօնական կիրարկումները կը դառնան իմաստազուրկ արարքներ: Ուստի, նաեւ՝ ծոմապահութիւնը: Խորհրդածութենէ զուրկ ծոմապահութիւնը կը դառնայ սննդականոնի պարզ կիրարկում մը. հետեւաբար՝ ոչ-կրօնական կիրարկում մը: Մինչդեռ կրօնական ծոմապահութիւնը հոգեւոր նպատակի մը կը ձգտի, եւ այդ նպատակը Քրիստոսի նմանութիւնը մեր սեփական անձին վրայ առնելն է: Այդպէս է, որ քրիստոնեայի կեանքը կ'իմաստաւորուի ու կ'արդիւնաւորուի:

Իւրաքանչիւր քրիստոնեայ պէտք է որոշէ՝ տարին եթէ ոչ բոլոր շաբաթներուն, գոնէ մէկ երկու շաբաթ կամ յատուկ շրջան մը, օրինակ Մեծ Պահքը օգտագործել՝ խորհրդածելու եւ ծոմ պահելու համար՝ որպէսզի Քրիստոսի նմանութիւնը իր վրայ բերէ:

Խորհրդածութենէ զուրկ ծոմապահութիւնը կը դառնայ սննդականոնի պարզ կիրարկում մը...

(Շարունակելի 25)

ԵՐԵՄՆՈՐԵԱԿ

Երեքշաբթի, 17 Փետրուար 2009

Ս. ՂԵՌՆՊԵԱՆԸ

Հրագրւթոր, 19 Փետրուար 2009

Ս. ՎԱՐՊԱՆԱԸ

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

18.30 Ս. Պատարագ

Կրոնար, 22 Փետրուար 2009

ԲՈՒՒ ԲԱՐԵԿԵՆՊԱՆ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեքշաբթի, 24 Փետրուար 2009

19.00 «The Da Vinci Code»

Ֆիլմի ցուցադրութիւն եւ զրոյց

Չորեքշաբթի, 25 Փետրուար 2009

ՄԵԾ ՊԱՇԵՐ Գ. ՕՐ

19.00 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք
«Հաւատով Խոստովանիմ»ը Ա.

Հրագրւթոր, 26 Փետրուար 2009

ՄԵԾ ՊԱՇԵՐ Դ. ՕՐ

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝
«Ողջախոհութիւն»ը

Կրոնար, 01 Մարտ 2009

ԱՐՏԱՔԱՄԱՆ ԿՐՈՆԱՐ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Չորեքշաբթի, 04 Մարտ 2009

ՄԵԾ ՊԱՇԵՐ Ժ. ՕՐ

19.00 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք
«Հաւատով Խոստովանիմ»ը Բ.

Հրագրւթոր, 05 Մարտ 2009

ՄԵԾ ՊԱՇԵՐ ԺԱ. ՕՐ

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝
«Ողորմածութիւն»ը

Կրոնար, 08 Մարտ 2009

ԱՆԱՊԱՐ ԿՐՈՆԱՐ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեքշաբթի, 10 Մարտ 2009

19.00 «Տա Վինչի Գոտ» քննարկում՝
Երիտասարդական ներկայացում/զրոյց

Չորեքշաբթի, 11 Մարտ 2009

ՄԵԾ ՊԱՇԵՐ ԺԵ. ՕՐ

19.00 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք
«Հաւատով Խոստովանիմ»ը Գ.

Հրագրւթոր, 12 Մարտ 2009

ՄԵԾ ՊԱՇԵՐ ԺԸ. ՕՐ

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝
«Խոնարհութիւն»ը

Կրոնար, 15 Մարտ 2009

ՏԱՏԱՐ ԿՐՈՆԱՐ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ

Ս. ԵՒ ԱՆԱՀ ՊԱՏԱՐԱԳ

Հրագրւթոր, 19 Փետրուար 2009
ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՐԸ 6.30

ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԺԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի.

514 331 5445 x203 կամ 514 909 5203

Սոյն թերթիւն ե-նամակով ստանալու

չանք Ձեր ե-Հասցէն ուղարկե՛՛՛ք

eglise58@sourphagop.com-ը

ՀՈԳԵՇԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ ՆԱԽՕՐՕՔ
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

ՀԱՄԱՅԵՐԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇԱՐԸ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՆԸ

ԲՁՅ Է

ԵՐԿՈՒԵԱՐԹԻՒՆ ՈՒՐԲԱՅ

ԺԱՐԸ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՃԵՅԷՔ ԿԱՊՈՒԻՂ ԲԱՐՏՈՒՊԱՐՈՒԹԵԱՆ՝

514 331 5445 x202

ԿԱՄ ՀՈՎԻՒՆ՝

514 331 5445 x203

ԿԱՄ ԳՐԵԼ ՇԵՏԵԿԵԼ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝

eglise58@sourphagop.com